ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ

Երկրաշարժը, որպես կանոն հանկարծակիի է բերում մարդկանց, ուստի կարևոր է ճիշտ ու կազմակերպված արձագանքել այդ իրավիճակին:

ԵԹԵ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՏՆՎՈՒՄ ԵՔ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ.

- Ճանապարհի վիճակն անկանխատեսելի կլինի:
- Տպավորություն կարող է առաջանալ, թե անիվն է վնասվել կամ տրանսպորտային միջոցը չի ենթարկվում կառավարմանը:
- Խուճապի մի՛ մատնվեք:
- Վարորդը անմիջապես կդանդաղեցնի երթևեկության ընթացքը՝ խուսափելով կտրուկ արգելակումից, որպեսզի ուղևորները չվնասվեն:
- Վարորդը կշարժվի դեպի ճանապարհի աջ հատվածը՝ խոշոր կառույցներից հնարավորինս հեռու:

Վարորդը կմիացնի ռադիոընդունիչը կամ տեղեկատվական համակարգը պաշտոնական տեղեկություններ ստանալու նպատակով:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՎԱՐՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՉՊԵՏՔ Է ԿԱՅԱՆՎԻ.

- Բազմահարկ շենքերի կողքին, կամուրջների տակ կամ վրա:
- Էլեկտրասյուների և էլեկտրական գծերի ներքո, գազալցակայանների ու բենզալցակայանների մոտ:
- Ծառերի տակ, փլուզման վտանգ ունեցող հենապատերի մոտ:
- Գովազդային վահանակների ներքո:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՎԱՐՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏՔ Է ԿԱՅԱՆՎԻ.

- Բաց տարածքներում, բաց ավտոկայանատեղիներում:
- Այլ մեքենաներից անվտանգ հեռավորության վրա:

Ինչ անել երբ տրանսպորտային միջոցը կայանվել է.

- Ուղևորներին խորհուրդ է տրվում մնալ տրանսպորտային միջոցում, եթե մոտակայքում խոշոր կառույցներ չկան և տարածքն անվտանգ է:

Եթե տրանսպորտային միջոցը գտնվում է վտանգավոր վայրում օրինակ՝ մոտ է խոշոր կառույցներին, էլեկտրասյուներին... ավտոբուսի դռներն անհապաղ կբացվեն վարորդի կողմից, որպեսզի ուղևորներն արագ, բայց առանց խուճապի տարհանվեն հնարավորինս բաց ազատ տարածություն:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Հիշեք՝ տրանսպորտային միջոցում մշտապես կիրառական վիճակում պետք է լինեն առաջին բուժօգնության պայուսակ, կրակմարիչ, լապտեր, ջուր:

Հնարավորության դեպքում առաջին բուժօգնություն կազմակերպեք ձեր կամ օգնության կարիք ունեցող այլ անձի համար:

Հնարավորության դեպքում հետևեք պաշտոնական տեղեկատվությանը, որպեսզի հասկանաք հնարավոր ռիսկերն ու իրավիճակի վերաբերյալ ճշգրիտ ինֆորմացիա ստանաք:

ՀՀ ՆԳՆ Սեյսմիկ Պաշտպանության Տարածքային Ծառայություն ՊՈԱԿ-ի
Բնակչության հետ տարվող աշխատանքների վարչություն
Հեռ: 060372275, 060372230
Էլ. Փոստ: nsspbtav@gmail.com
Վեբ կայք: https://www.nssp.am/hy